Տարընթերցում.— 1. Զալ, *որից նաև* Վիմ *5-րդ տողում* կոռին *կարդացել են* Հոռին *(անձնանուն կարծելով)*:

2. *9-րդ տողում* Քուրդաշաճին Զալ *և* Վիմ *կարդացել են* քրդին:

## 47. Մեծ գավթի միջին ճավի թաղին, քարձուս

(Լուս. № 42)

*ԺԳ դար*

Հրատարակված է՝ Զալ 22, Վիմ 140—141

1 *Ես ամիրսպասալար Մխարգրձէլս, որդի Շահնշահի, յայս ժամ զիս սաբրզանմիշ արար եւ գերկիրս յաւր եր է-*
2 *կի վանքս ու զտեղս անմարդ գտաք որ ի մուհասլաց եւ առաջնորդէ եւ այլ հարկէ աւէրած էր եւ էկեղեցիքս փակած։ Ե-*
3 *ւ զայս խաւարս տեսաք, մահու չափ տրտմեցաք, յաւագ զատկին զվ(ար)դ(ապետն)երն ի քաշ էին արարել եւ այլ շատ նախատինք։ Եւ արդ, ես,*
4 *ամիրսպասալար Մխարգրձելս եւ Թագաւորազն ամուսին իմ Վանենի,*



*Նկ. 42. Արձ. № 47:*

*ուխտ դրաք Ա̅յ եւ Ա̅ծածինս եւ մեր պապերէ զմեծ ար-*
5 *ձանս փորեցաք եւ զեկեղէցիք ամեն հարկէ ազատեցաք, այժմ հէտէ ո՛չ մուհասիլ եւ ո՛չ այլ հարկահան Սանահինս*
6 *չմտանէ։ Եւ այս բանիս կարացաք զմխար(ան)քս յետ ժողովել եւ հաստատեցաք, որ էթէ մեք կամ եղբարց մեր կամ ազ-*
7 *գէ, կամ վանեցս հայր, կամ այլ ով էք խափանել ջանա, ի Ա̅յ դաւանութէնէն որոշել լիցի — — անձին, ընդ Նեռին, ընդ*
8 *Յուդայի, ընդ խաչահանման, ընդ հերձւածողսն, ընդ Արիոսի անիծել լիցի, որ զէդել ուխտս մեր խ-*
9 *ափանէ։ Եւ արդ, առաջնորդ ս̅բ ուխտիս հայրս Կիրակոս եւ միայբանքս ա̅ծասէր պարոնացն*
10 *զհոգեւոր պարգեւիւքս հաստւցաք յանուն մեր։*
11 *Ենաւք Պ . . . ես։*